# ՏԵՂԵԿԱՑՈՒՄ

## Թումանյան համայնքի ավագանու արտահերթ նիստի վերաբերյալ

| Համայնքը | Միջոցառման անվանումը | Օրը | Ժամը | Անցկացման վայրը |
|---|---|---|---|---|
| **Թումանյան** | Ավագանու արտահերթ նիստ | 12.06.2020թ. | 15:00 | Թումանյա համայնքի ք.Թումանյանի մշակույթի պալատի Սմարթ սենյակում |

**Օ Ր Ա Կ Ա Ր Գ**

2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 12 –ԻՆ՝ ԺԱՄԸ 15.00-ԻՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՔԱՂԱՔԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՊԱԼԱՏՈՒՄ ԿԱՅԱՆԱԼԻՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

ԺԱՄԸ՝ 15.00

1.ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 12 –Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

զեկ.Լ Ջավարյան

2.<<ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ>> ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

զեկ.Լ Ջավարյան

*3.* ԹՈՒՄԱՆՅԱՆ ՔԱՂԱՔԻ 12-ՐԴ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 33 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՅԳԵՏՆԱԿԸ, ՊԱՐԻՍՊԸ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀՈՂԱՄԱՍ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

զեկ. Ե.Շաքարյան

4. ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԽՈՏՀԱՐՔԸ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

զեկ. Ե.Շաքարյան

*5.ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ*

զեկ. Ռ.Շահվերդյան

6. ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

զեկ. Ռ.Շահվերդյան

ՆԱԽԱԳԻԾ

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020
ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 12–Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ
ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ. ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 17-րդ հոդվածով՝ Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Թումանյան համայնքի ավագանու 2020 թվականի հունիսի 12-ի արտահերթ նիստի օրակարգը.

1.ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 12 –Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

զեկ.Լ Զավարյան

2.<<ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ>> ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

զեկ.Լ Զավարյան

*3.* ԹՈՒՄԱՆՅԱՆ ՔԱՂԱՔԻ 12-ՐԴ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 33 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՅԳԵՏՆԱԿԸ, ՊԱՐԻՍՊԸ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀՈՂԱՄԱՍ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

զեկ. Ե.Շաքարյան

4. ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԽՈՏՀԱՐՔԸ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

զեկ. Ե.Շաքարյան

*5.ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ*

զեկ. Ռ.Շահվերդյան

6.ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

զեկ. Ռ.Շահվերդյան

ՆԱԽԱԳԻԾ

<<ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ>> ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ. ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18 -րդ հոդվածի 28-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ և 37-րդ հոդվածներով՝ Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել <<Թումանյանի քաղաքային համայնքի կոմունալ տնտեսություն>> ՀՈԱԿ-ի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն 1 հավելվածի:
2.Ուժը կորցրած ճանաչել Թումանյան համայնքի ավագանու 2020թ. հունվարի 17-ի <<Թումանյանի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> թիվ 5-Ա որոշման 5 հավելվածը:

Հավելված 1

Հաստատված է

**Թումանյան համայնքի ավագանու**

**2020 թ հունիսի 12-ի թիվ -Ա որոշման**

<<ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ>>

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

1.Աշխատակիցների թվաքանակը` 22:

2.Աշխատակիցների հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը`

| h/h | Հաստիքի անվանումը | Հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափը /ՀՀ դրամ/ |
|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 144 000 |
| 2 | Տնօրենի տեղակալ | 1 | 130 000 |
| 3 | Հաշվապահ | 1 | 102 000 |
| 4 | Վարորդ աղբատարի | 1 | 95 000 |
| 5 | Վարորդ ինքնաթափի | 1 | 95 000 |
| 6 | Վարորդ տրակտորի | 1 | 120 000 |
| 7 | Բանվոր | 7 | 92 618 |
| 8 | Պահակ/ավտոպարկի/ | 3 | 110 700 |
| 9 | Հավաքարար | 1 | 92 618 |
| 10 | Վարորդ գազելի | 0,5 | 92 618 |
| | Ընդամենը | 18 | **1074.554** |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՔԱՂԱՔԻ 12-ՐԴ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 33 ՀԱՍՑԵՈՒՄ
ԳՏՆՎՈՂ ԱՅԳԵՏՆԱԿԸ, ՊԱՐԻՍՊԸ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ
ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ
ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ. ԵՐՎԱՆԴ ՇԱՔԱՐՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով, հաշվի առնելով Թումանյան համայնքի ավագանու 2020թ. մայիսի 13-ի թիվ 24-Ա և համայնքի ղեկավարի 2020թ. մարտի 4-ի թիվ 27-Ա որոշումները քաղաքացի Շամիր Սերոբի Հովսեփյանի կողմից Թումանյան քաղաքի 12-րդ փողոցի թիվ 33 հասցեում 0,09544հա մակերեսով բնակելի կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված 7,7 քմ մակերեսով այգետնակի և 5,6քմ /14խմ/մակերեսով պարսպի նկատմամբ ճանաչված համայնքի սեփականության իրավունքը /սեփ. վկայական՝ N 25052020-06-0001՝ ծածկագիր՝ 06-004-0021-0187/, համայնքապետարանի գրավոր առաջարկությունը՝ վերոհիշյալ ինքնակամ շինությունները ձեռք բերելու նպատակով քաղաքացու կողմից տրված համաձայնությունը և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝
Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

1.Տալ համաձայնություն Թումանյան քաղաքի 12-րդ փողոցի թիվ 33 հասցեում գտնվող 7,7քմ մակերեսով այգետնակը, 5,6քմ մակերեսով պարիսպը և կառուցման և սպասարկման 0.09544 հա մակերեսով հողամասը հետևյալ արժեքներով քաղաքացի Շամիր Սերոբի Հովսեփյանին ուղղակի վաճառքով օտարելու համար՝

1) այգետնակի համար՝ 7,7x30000x0,035= 8085դրամ

2) պարսպի համար՝ 5,6x20000x0.035=3920 դրամ

3) հողամասի համար՝ 0,09544x96դրամ =91622,4դրամ:

ՆԱԽԱԳԻԾ

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ
ԽՈՏՀԱՐՔԸ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ. ԵՐՎԱՆԴ ՇԱՔԱՐՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝
Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն համայնքային սեփականություն հանդիսացող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայական N 19052020-06-0036 ) Թումանյան համայնք, Լորուտ գյուղի կադաստրային քարտեզի 06-045-0178-0005 ծածկագրի գյուղատնտեսական նպատակային նշանակության 0,209 հա մակերեսով խոտհարքը աճուրդ- վաճառքով օտարելու համար:

2. Հողամասի մեկնարկային գինը սահմանել 200000 ՀՀ դրամ, քայլի չափը սահմանել 10000 ՀՀ դրամ, նախավճարի չափը սահմանել՝ 10000 ՀՀ դրամ:

ՆԱԽԱԳԻԾ

*ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ*

/ԶԵԿ. ՌՈՒԶԱՆՆԱ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ/

Ղեկավարվելով<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով,հիմք ընդունելով Թումանյան համայնքի ավագանու 2020թ. հունվարի 17-ի <<Թումանյան համայնքի 2020թ. բյուջեն հաստատելու մասին>> թիվ 2 -Ն որոշումը, Թումանյան համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման,հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունը, Թումանյան համայնքի ղեկավարի,Մարց և Լորուտ բնակավայրի վարչական ղեկավարների առաջարկությունները և հաշվի առնելով Թումանյան համայնքի բնակիչների դիմումները՝
Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

Թումանյանի համայնքապետարանի սոցիալական օգնություն խմբի այլ նպաստներ բյուջեից /հոդված 4729 / Թումանյան համայնքի սոցիալապես անապահով քաղաքացիներին տրամադրել դրամական օգնություն՝ համաձայն հավելվածի:

Հավելված
Թումանյան համայնքի ավագանու
2020թ. հունիսի 12-ի թիվ - Ա որոշման

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

1.Ըստ ստացված դիմումների Թումանյան համայնքի հիշյալ սոցիալապես անապահով բնակիչներին հատկացնել դրամական օգնություն.

1) Մելիքսեթյան Գագիկ Վարոժայի-գ.Լորուտ– 50000 ՀՀ դրամ,
2) Չերչինյան Նարինե Ֆրունզիկի -ք.Թումանյան– 10000 ՀՀ դրամ,
3) Մկրտչյան Նարեկ Սամվելի -ք.Թումանյան– 10000 ՀՀ դրամ,
4) Դավթյան Անուշ Սամվելի -ք.Թումանյան– 10000 ՀՀ դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ
ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԱՆԴԱՄԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ
ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ. ՌՈՒԶԱՆՆԱ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով և Թումանյան համայնքի ավագանու անդամ Սեյրան Արմենի Այդինյանի դիմումը՝
Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

Վաղաժամկետ դադարեցնել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնքի ավագանու անդամ Սեյրան Արմենի Այդինյանի լիազորությունները: